ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 628-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԲԱՆԱՎԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑ , ՇԵՆՔ 1/2, ԹԻՎ 12 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՅՔԱՐԻ ՇԻՐԻՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 143-Ա որոշումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն համարվող Ջրաշինարարների բանավան 3-րդ փողոց, շենք 1/2, թիվ 12 բնակարանը՝ 70"39 /յոթանասուն ամբողջ երեսունինը հարյուրերորդական /քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, նույն շենքի գույքի և հողամասի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքում, համապատասխան բաժնեմասի հետ նվիրատվության կարգով նվիրել Անդրանիկ Պայքարի Շիրինյանի չորս անձից բաղկացած ընտանիքի հետևյալ անդամներին.

ինքը՝ Շիրինյան Անդրանիկ Պայքարի, ծնված 15.12.1957թ.

կինը՝ Շիրինյան Լաուրա Մկրտիչի, ծնված 26.02.1961թ.

տղան՝ Շիրինյան Կարեն Անդրանիկի, ծնված 14.01.1985թ.

աղջիկը՝Շիրինյան Աննա Անդրանիկի, ծնված 10.02.1997թ.

2.Հանձնարարել.

ա) Ախուրյանի համայնքապետարանի ֆինանսական բաժնին, նվիրատվությունից հետո նշված բնակարանը դուրս գրել հաշվեկշռից:

բ) սեփականատիրոջը՝ համապատասխան փաստաթղթերներ ներկայացնել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի մարզային ստորաբաժանում գրանցում կատարելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

« 03 » հոկտեմբերի 2022 թվական

գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբերի 2022 թվականի թիվ 629

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 01-Ի ԹԻՎ 411 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-իմ մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներով որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքն աճուրդով կազմակերպելու համար աճուրդային հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի կազմից աճուրդավար ու արձանագրող նշանակելու մասին>> թիվ 411 որոշման 1-ին կետի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերից հանել <<ժամանակավոր պաշտոնակատար>> բառերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԻԳԻԹՅԱՆ

«03» հոկտեմբերի 2022 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ

03 հոկտեմբերի 2022 թվականի N 630-Ա

«ՄՏՍ» ՀԱՅԱՍՏԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդհոդվածի 1-ինմասի 12-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 15-ն որոշման 1-ին կետի թիվ 1 հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետի <<դ>> պարբերության դրույթներով և հաշվի առնելով <<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԲԸ_ի հայտը՝ որոշում եմ

<<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> փակ բաժնետիրական ընկերությանը տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրում 3.5քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2022 թվականի համար:

2. Հաստատված թույլտվությունը (N1ձև) սահմանված ժամկետում հայտատուին հանձն ել միայն տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ**